

# ՄԱՅԻՍ

Ցարական գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբ.  
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».  
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունուում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են  
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.

Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

## ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այսօրվայ հանդէսը, վաստակաւոր ազգա-  
բնակչութեան վիճակը.— Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.  
Պաշտօնական հեռագիրներ. «Հաւիդ» լրագրի երկու  
հարցումը. Նամակներ Մոսկվայից. Նամակ Դու-  
շուց. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—  
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւն-  
ներ. Նամակ Բաղրամյանից. Նամակ Պարսկաս-  
տանից. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱՎԻՐՆԵՐ.—  
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Յարե-  
րի թագադրութիւնը.

### ԱՅՍՕՐՎԱՅ ՀԱՆԴԵՍԸ

Ամբողջ Ռուսաստանի ուշադրութիւնը  
դարձրած է դէպի Մոսկվա: Ռուսաստանի  
Հին-մայրաքաղաքում, այսօր, երեքշաբթի,  
մայիսի 14-ին կատարվում է երեսուսարդ  
կայսր Նիկոլայ Ալեքսանդրովիչի և կայս-  
րուհի Ալեքսանդրա Ֆեոդորովնայի թագա-  
դրութեան փառաւոր հանդէսը, ներկայու-  
թեամբ եւրոպական և ասիական պետու-  
թիւնների բազմաթիւ ներկայացուցիչների,  
լայնածաւալ պետութեան զանազան դասա-  
կարգերի պատգամաւորութիւնների և ժո-  
ղովրդի ահագին, ոգևորված բազմութեան:  
Պետութեան հարիւր միլիոն ազգաբնա-  
կութիւնը անհամբեր սպասում է թա-  
գադրութեան շքեղ հանդիսի մանրամաս-  
նութիւններին և բարձրագոյն հրովարտա-  
կի հրատարակութեան:

Տարի ու կես է արդէն, որ Նիկոլայ  
կայսրը իր ձեռքն է առել պետութեան  
կառավարութեան ղեկը: Իր թագաւորու-  
թեան առաջին օրերից Նա բարձրագոյն  
յայտնեց իր համակրութիւնը մտաւոր  
գործողներին և հրաւիրեց նրանց գործե-  
լու ժողովրդի և երկրի բարօրութեան  
համար: Առանձին ուշադրութեան առաւ  
զրական գործողների վիճակը և նշանակեց  
տարեկան 50 հազար ռուբլի նպաստ կա-  
րօտ գրական գործողներին և նրանց ա-  
նօգնական ընտանիքներին: Կայսրը իր ա-  
ռաջին մեծ խրախույսներից մէկը կարգա-  
դրող գիւղատնտեսական ընկերու-  
թիւններին, հրաւիրելով երկրի արդիւ-  
նագործութեան զարգացման գործը ա-

ռաջ տանելու: Թագուհի Կայսրուհին իր  
առանձին խնամատարութեան ներքոյ ա-  
ռաւ աշխատանքի տները, որոնք  
հիմնվել են և հիմնվում են Ռուսաստանի  
զանազան կենտրոններում: Նորին Մեծու-  
թեան վերջին կարգադրութիւններից մէկը  
եղաւ ուսանողութեան համար հանրա-  
կացարան հաստատելը Մոսկվայում, որի  
համար յատկացրեց 300 հազար ռուբլի:  
Այսպէս ուրեմն, գահի բարձրութիւնից,  
Ռուսաստանի երիտասարդ կայսրը համա-  
կրութիւն յայտնեց գրականութեան և մա-  
մուլի մշակներին, զնախառնելով տպա-  
գրական խօսքը. բարձրագոյն դիմումն  
արեց դիւլաւանտեանական ասպարէզում գոր-  
ծողներին, հրաւիրելով ջանք թափել պե-  
տութեան ամենանշանաւոր մասի՝ բուն  
ժողովրդի տնտեսական բարեօրման  
համար. շեշտեց աշխատանքից զուրկ կա-  
րօտ աշխատանքի տներին ապահովութեան  
վրա, և վերջապէս արտայայտեց իր հա-  
մակրութիւնը ազգաբնակչութեան ասպա-  
զայ գործողներին՝ ուսանողութեանը,  
զանաքանակից խոշոր նպաստ յատկացնե-  
լով: Եւ ահա հիմնված երիտասարդ կայսրի  
բարձրագոյն կամքի այդ համակրելի ար-  
տայայտութիւններին վրա՝ ամբողջ Ռուսաս-  
տանը, իր մէջ սպրդող բոլոր ազգութիւն-  
ներին և կրօններին պատկանող համայնը-  
ներով՝ այսօր սպասում է բարձրագոյն  
կամքի նոր հանդիսաւոր արտայայտութեան,  
կայսերական հրովարտակին:

Ռուսաստանում ապրող հայ ժողովուր-  
դը, որ դարուց ի վեր կապված է պետու-  
թեան հետ քաղաքացիական սերտ կապե-  
րով, որ բազմաթիւ ապացոյցներ է տուել  
թէ դիմէ անկեղծ, անխաղաղ կերպով  
վշտակցել ամբողջ պետութեան վշտին, և  
ուրախանալ ընդհանուր հայրենիքի ուրա-  
խութեան փայլունքին, այսօր, Նոյն կայ-  
սերական Մեծութիւնների թագադրութեան  
հանդիսաւոր փայլունքին, միացնում է իր  
բարեմաղթութիւնները և ջերմ զգաց-  
մունքները ամբողջ պետութեան զգաց-  
մունքներին, միանգամայն հաւատացած, որ  
մեր ընդհանուր հայրենիքը, նոր կայսրու-  
թեան օրով, անարդել կերպով կառաջա-

դիմի կուլտուրական խաղաղ ծանապարհով,  
միշտ ձգտելով դէպի առաջ, դէպի բարձր  
քաղաքակրթութիւնը, որ խոստանում է  
բարիք և երջանկութիւն բոլորին՝ առանց  
խտրութեան կրօնների, ազգութեան և  
զասակարգերի:

### ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԱԶԳԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ

Անդիայի կանանց նպաստող ֆոնդը վանից,  
օրինաբար կիմբելից ստացել է հետեւեալ տե-  
ղեկութիւնները.— Վանում, մարտ ամսվայ ըն-  
թացքում, բաժանված են պատրաստի զգեստ  
2331, ձոթիկէն՝ 288, գուլպաներ՝ 600: Ընդամե-  
նը 1318 հոգի ստացել են 223 լիւրա արժողու-  
թեամբ իրեր: Հացի վեց փուտերից երկուսը  
փակվեցին և հացի բաժինները կէս կէս արվե-  
ցին՝ մասամբ այն պատճառով, որ նպաստի  
փողն է պակասել, մասամբ էլ ցորենի պակա-  
սութեան պատճառով, որովհետեւ ցորենի գինը  
բարձրացել է 20%: Այս վիճակը բոլորովին ան-  
տանելի կը լինէր, եթէ ձիւնը անհետացած չը  
լինէր. այժմ ժողովուրդը միջոց ունի կերակրվել  
կանաչով և արմատներով:

Չորս հազարուերը կերակրում են օրեկան  
7467 անձանց, որոնցից 5220 բաղաքի ազգա-  
բնակչութիւնն են և 2247 գիւղական: Ընդամե-  
նը նպաստ ստացել են 19,230 անձիք, որոնցից  
10,867 բնադարացի, իսկ մնացածը գիւղացի:  
Վերջին հինգ շաբաթվայ ընթացքում երեք նը-  
պաստող խմբեր ուղարկվեցին Արձնէ՝ 100 լիւրա-  
յով, Շառախ՝ 150 լիւրայով և մի քանի գիւղեր,  
որ պատասպարվել են Բոզազ Ռիզոի և Զեղեղէի  
կողմերից եկած 600 փախստականներ—60 լի-  
րայով: Կարելի մեծ է, և եթէ նպաստը զգա-  
րի պէտք է կարօտեալները քաղցից մեղմեն  
Բէյութէի և Պալի գործակալը հաղորդում է,  
թէ միտ Բարաքը հեռագրել է ստացել Արաբի-  
րի բժիշկներից, որ այնտեղ տարածված են և  
մեծ զոհեր են տանում տիֆ և փոքրահիւս  
կանաչութիւնները: Աղքատութիւնը և զրկանքնե-  
րը մեծ են: Ընդհանուր կարծիքն այն է, որ վը-  
տանգաւոր հիւանդութիւններ կը տարածվեն բո-  
լոր այն տեղերում, ուր անցեալ տարի կտա-

րածներ են եղել, որովհետեւ այնտեղ ջրերը վը-  
չացել են: Կազմակերպվել է բժիշկների մի նոր  
խումբ, որի մի մասը պէտք է ուղարկվի Արաբ-  
իլի, իսկ միւսը՝ Մարաշ և Զէյթուն, բժիշկ իրա  
Հէլիսին օգնելու:

Միտ Բարաքի ուղարկած բժիշկների խում-  
բը արդէն լաւ գործունէութիւն ունեցաւ: Հաս-  
նելով Այնթապ՝ նա երկու մասի բաժանվեց,  
մէկը գնաց արեւմուտք՝ Մալաթիայի և Մարաշի  
կողմերը, միւսը արեւելք՝ Ուրֆա և Դիարբեքի:  
Ամբողջ ճանապարհի գծով նրանք բաժանում  
էին ուտելու և հագնելու մթերք, բացի այդ,  
գործիքներ և սերմացու հացահատիկներ: Երկու  
մասն էլ այժմ հասել են խարբէր, որտեղից  
հեռադրում են, որ խարբէրի գաւառի 300  
գիւղերը սարսափելի կարօտութեան մէջ են և  
պէտք է թէ սերմացու բաժանու, թէ գործիքներ  
և լծկան անասուններ առլ և թէ բժշկական օդ-  
նութիւն հասցնել: Միտ Բարաքը կարգադրեց,  
որ խումբը մնայ խարբէրում և հասցնի բոլոր  
անհրաժեշտ պիտույքները ժողովրդին:

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

#### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԵՐԱՎԻՐՆԵՐ

«Արարատի» մէջ կարգում ենը, «Ստանալով  
Նասրէ-է-ղին Դաւիթի մահվան լուրը, Ամենայն հա-  
յոց կաթողիկոսը ուղարկել է հետեւեալ հեռագի-  
րը պարսից լեզուով, ապրիլի 23-ին.

«Նորին արեւգահալի ալիաժիւ մեծու-  
թեան Մուհամմադ-է-ղին Դաւիթի հա-  
ւաճեցեք ընդունել զհաւատարմութեան մերոյ  
ի պատճառս եղբայրական մահու  
բարեգործ Նասրէ-է-ղին Մեծի Դաւիթի ծնողի ձե-  
րոյ, և զսրտազին հորհարողութեան վան ամ-  
բառնալոյ Մեծութեան Զերոյ ի դա՛ փառաւոր  
նախնեաց ձերոց: Ազդեցի առ Աստուած, զի  
տացէ ձեզ կեանս երկարս և բարեբախտակ  
կար՝ առ ի հաւատարկ փառաք յաւերժապիշատակ  
ծնողին ձերոյ և ըստ օրինակի նորին տարածել  
դէսը և զհոգածութիւն ձեր զնախնական ի վերայ  
հայ հպատակաց ձերոց:»

Մ կ ռ ա թ ի Վ ա թ ո ղ ի կ ո ս Ա մ. հ ա յ ո յ.

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

#### ՅԱՐԵՐԻ ԹԱԳԱԿՐՈՒԹԻՒՆ

(Պատմական տեսութիւն)

Այսօրվայ հանդիսաւոր թագադրութեան առի-  
թով հարկաւոր ենը համարում մի պատմական  
տեսութիւն անել այն մասին, թէ ինչպէս էին  
թագադրվում և օծվում առաջ Մոսկվայի ցարե-  
րը և թէ ինչ ծէսեր ու արարողութիւններ կան  
սահմանված գրա համար:

Նախ պէտք է նկատենք, որ թագադրութիւնը  
կամ զանախարութիւնը, և օծումը տարբեր տար-  
բեր արարողութիւններ են: Մինչդեռ թագադրու-  
թեան կամ զանախարութեան հանդէսը կատա-  
րում էին և կատարում են թէ՛ ինչ և թէ՛ ժամա-  
նակակից պետութիւնների վիճակները քրիս-  
տոնէութիւնից առաջ և յետոյ, սուրբ օծումը  
սկսվել է միայն քրիստոնէութիւնից յետոյ: Այդ  
արարողութիւնը քրիստոնէական եկեղեցին վեր  
է առել ինչ կտակարանից և պէտք է ենթա-  
դրել, սահմանել է իր այն վարդապետութեան հի-  
ման վրա, թէ «իշխանութիւնը Աստուածանից  
է»: Այսպէս, օրինակ, մենք տեսնում ենք պատ-  
մութեան մէջ, որ Բիւզանդիայի կայսրները օ-  
ծումն էին ընդունում, նրանց օրինակին հետեւե-  
լով, միւս բոլոր քրիստոնէայ թագաւորներն էլ  
սկսեցին օծումն ընդունել եկեղեցուց:

Ռուսաստանի մէջ օծման արարողութիւնը  
հաստատվել է իվան IV Ահարկու (Ուլան Գրոզ-  
նի) թագաւորի օրից, այնպէս որ այդ ժամա-  
նակից թագադրութեան հետ միասին ուսաց  
թագաւորները ընդունում են և մեռնի օ-  
ծումը: Թագադրութեան կամ թագաւորական  
դահլի վրա նստելու հանգէլը մտել է Ռուսաս-  
տան Բիւզանդիայից քրիստոնէութեան հետ միա-  
սին և ուսաց իշխանները կամ աւելի ճիշդն  
ասած՝ Մոսկվայի մեծ իշխանները սկսել են գոր-  
ծածել այդ հանդէսը X-րդ դարից սկսած: Բայց  
միայն XII-րդ դարի տարեգրութիւնները տալիս  
են մեզ հաստատ ապացոյցներ այն մասին, թէ  
ուսաց իշխանները նուիրագործում էին իրանց  
իշխանութիւնը մի արարողութեամբ, որ կոչ-  
վում էր «посажение на столъ» (աթոռի վրա  
նստացնել), որը ապագայում փոխարկվեց թագա-  
դրութեան: Այն ժամանակ, երբ Ռուսաստանը  
զեռւ չէր կազմակերպված, երբ նա ըստինքն  
էր զանազան մանր-մուշր իշխանութիւնների,  
նորիւսը էր որ զիւսուր կամ առաջին իշխա-  
նի իրաւասութիւնը ձանաչէին նրա ազգակից  
իշխանները և երկրի ազգաբնակչութիւնը, իսկ  
այդ իրաւասութիւնը ձանաչելու առաջին նշանը  
«աթոռի վրա նստելն» էր: Առանց այդ արար-  
ողութեան իշխանը չէր կարող կատարելապէս  
տիրապետող իշխան համարվել:

«Աթոռի վրա նստելու» արարողութիւնը կա-  
տարվում էր հետեւեալ կերպով: Մեծ իշխանը,  
չլրջապատված փոքր իշխաններով, բռնաբերով  
և քաղաքի նշանաւոր բնակիչներով, ձիւն վրա

նստած մտնում էր քաղաք: Քաղաքի դրանը  
նրան դիմաւորում էին հոգեւորականութիւնը  
խաչ ու խաչվառով, և ժողովուրդը ու առաջ-  
նորդում դէպի մայր-եկեղեցին, որտեղ նրան  
«պատուով» նստացնում էին իշխանական աթո-  
ռի վրա: Այդտեղ եպիսկոպոսը օրհնում էր իշ-  
խանին և աղօթքներ կարդում: Դրանից յետոյ  
ինձնոյ էր պատրաստվում բոլոր նշանաւոր ան-  
ձանց և հոգեւորականութեան համար, իսկ փո-  
ղոցներում սփռուցներ էին փռում ժողովրդի  
համար և դնում էին զինի, մեղր և ամեն տե-  
սակ ուտելիք: Բացի դրանից իշխանը շողորմու-  
թիւն էր բաժանում ժողովրդին և նուէրներ էր  
տալիս վանքերին ու եկեղեցիներին:

Մոնղոլական լուծի ժամանակ այդ արարողու-  
թիւնը կատարվում էր թաթարների խանի գլխա-  
ւոր մասնակցութեամբ: Մեծ իշխանը, որին  
խանը կամենում էր առ իշխանութիւնը, գնում  
էր Ոսկի-Ուրդան, այդտեղ խանը իր ամբողջ պա-  
լատի ներկայութեամբ յանձնում էր իշխանին  
թուր և յայտարարում էր նրան «Մոսկովի մեծ  
իշխան»: Յետոյ խանի զեպակները վեր առնե-  
լով իշխանին իրանց հետ, տանում էին Ռուսաս-  
տան և հասնելով իշխանական քաղաքը, նստեց-  
նում էին նրան աթոռի վրա բռնաբերելի և հո-  
գեւորականութեան ներկայութեամբ և կարգում  
էին խանի ֆերմանը, որով իշխանը հաստատ-  
վում էր մեծ-իշխան Մոսկվայի: Այդտեղ բռնա-  
բերում էին իշխանը ընդունում, իսկ խանի զե-  
պակները առաւ ընծաներով վերադառնում էին  
Օրդան և յայտնում խանին, թէ նրա հրամանը

կատարված է:  
Այդպէս շարունակվեց մինչև XV-րդ դարը,  
երբ Մոսկվայի մեծ-իշխանութիւնը ուժեղանալով  
թէ բարոյապէս և թէ ծաւալով, կարողացաւ թո-  
թափել մօնղոլական լուծը ու իր իշխանութեան  
ենթարկեց մանր իշխանութիւնները: Զգալով ի-  
րանց զօրեղ և տիրապետող, մեծ-իշխանները  
սկսեցին իրանց աւելի անկախ և ինքնուրոյն  
պահել: Իվան III ամուսնանալով բիւզանդական  
վերջին կայսրի աղջկայ՝ Զոա Պոլեւոյի հետ,  
սկսեց թագաւորական չուքով ապրել, զազաւեց-  
րեց նախկին նախապետական յարաբերութիւն-  
ները բռնաբերել ու փոքր իշխանների հետ  
և համարելով իր իշխանութիւնը Աստուծոյց  
տուած՝ սկսեց գործածել «Որդումութեամբ Աս-  
տուծոյ, Թագաւոր և Մեծ-իշխան ամենայն ուս-  
աց» տիտղոսը: «Աթոռի վրա նստելու» արա-  
րողութիւնը գտնելով շատ պարզ և անշուք, նա  
ցանկացաւ իր յաջորդին և ժամանակին աւելի  
հանդիսաւոր եկեղեցական ծէսով թագաւոր պը-  
սակել: Դրա համար նա որոշեց գործադրել այն  
թագը և բէգալի տները, որոնք աւանդու-  
թեան համաձայն մի ժամանակ Գլխաւորանից  
ուղարկվել էին և անցնելով սերունդից սերունդ՝  
պահվում էին Մոսկվայի մեծ-իշխանական ընտա-  
նիքի մէջ: Այդ աւանդութեան համաձայն, Բիւ-  
զանդիայի կոնստանտին Մոնթալի կայսրը, թրա-  
կեացիների պատերազմից յետոյ, ուղարկում է մեծ-  
իշխան Վլադիմիր Վսեփօլոյիին Եփեսոսի միտ-  
րօպոլիտ Նեֆիտի ձեռքով, մի խաչ՝ կենդանործա-  
նից, մի թագ, որ կոչվում է «Մոնթալի» դը:

Նորին Մեծութիւնն Շահը թաւրիզից հետեւալ հեռագրով պատահաւորեց Նորին վեհափառութեան հեռագրին:

Եւ մի անգամ, Նորին Սրբութիւնն Տ. Մկրտիչ Կաթողիկոսի Ամենայն Հայոց:

«Ձգաքեալ եմ յանձնուս վասն արտայայտեալ անկեղծ զգացմանց և կարեկցութեանն, զորս հաճեալ էիք յայտնել ինձ ի պատճառս զի պատճառս իմ հպատակս իմ, յայտնեմ ձեզ զիմ հորհրդակալութեամբ զԱստուած օգնել ինձ առ ի կատար անել զգիտաւորութիւնս իմ, որը հային յերջանկութիւն և ի բարօրութիւն ժողովրդեան իմաց, զի առանց խորութեան ամենեքին կարող լինցին վայելել խաղաղ և անդորր կեանս:»

Մ ու զ ա ֆ ա ր - է զ - դ ի ն Շ ա հ Կ ա ջ ա ր

### «ՇԱԽԻՎ» ԼՐԱԳՐԻ ԵՐԿՐԻ ՀԱՐՑՈՒՄԸ

«Շախիվ» մէջ կարգում ենք. «1895 թիւ «Շախիվ» № 34-ում հրատարակով հետեւեալ հարցերն էինք տեւել Կովկասի երկու թերթերին—«Արձա-գանքին» և «Նոր-Կարին»:

1) «Արձագանքին» և «Նոր-Կարին» հարցաւոր փողը Գեօկչայ գետաւոր Ղալազէ գիւղի հիւրընկալ-ներին համար, 1893 թիւին, որից միայն 1500 ռուբլի Մոսկովայից էր եկել: Ի՞նչ արիք այդ փողը, որտեղ ուղարկեցիք, ի՞նչ բանի համար գործածեցիք:

«Ձը նայելով որ 5 ամիս ժամանակ էինք տուել պատասխանելու, «Արձագանքը» լուրջութեամբ պահանջեց: Միամիտ թերթը կարծում է, որ լուրջութեամբ արհամարհութեան նշան է. բայց այստեղ ինչի նշան, արհամարհութեան թէ յանցաւորութեան ու խտրականութեան, որ «Արձագանքի» խմբագիր պ. Աբգար Յովհաննիսեանը կերել է հասարակական փողերը և օգտուելով հանգամանք-ներէրց աղատ է մնացել:

«Յայտարարում ենք հրատարակով «Արձագանքի» խմբագրին որպէս հասարակական գրամ կրանոդ անագին գործող:

2) «Նոր-Կարին» թերթին.—Ի՞նչ եղաւ իւ. Աբու-վեանցի արձանի համար ձեր հաւաքած փողերը: Ո՛ր է արձանը կամ ո՛ր է փողը: «Նոր-Կարին» էլ չը պատասխանեց, որովհետեւ այդ նպատակով հաւաքված փողերն էլ երկի Զէյթունի 1500 ռ. փողերի օրն է ընկել, այսինքն անմիտ ամբողջութեամբ անհիշ նպատակների կողմատու «Միջոցա-խօսակարի» կողմից մտել: «Նոր-Կարին» խմբագիրը առաջին անգամը չէ, որ խարանովում է որպէս հասարակական փողերի կրանոդ:

«Յայտարարում ենք, որ քանի արձանը չը կայ և փողերի գործածելու հաշիւն էլ չէ տրվում, պ. Աբու-վեանցի Սպանդարեանին իրաւունք ունենք կոչելու հասարակական փողեր ուտող:»

խարկ», և Հռոմէական կեսար Սոստոսի բաժակը: սերգուիկից շինած, ոսկէ շղթայ և այլ թանգա-գին ընծաներ: Ահա այդ Մոնոմախի գլխարկով միպրոպուլիտ Նեֆիթը պահուում է Վաղարշա-պատի թագաւոր մեծ Ռուսաստանի:

Այդ բէգաւի ան և բը կամ արքայական իշ-խանութեան հանգանակները մինչև այսօր էլ պահուում են Մոսկովայի Օրուսէյնի կոչված պա-լատում: Գրանց հետ միասին պահուում են և ու-րիշ բէգաւի ան և բը—բարմեբը (бармы), գա-յիս օն (скипетр) և վեհապետական գունդը կամ խնձորը (держава или яблоко державное), որոնք սկսեցին գործածվել ապագայում: Բացի դրանից այդ ժամանակ Կ. Պոլսից ուղարկեցին և մեռո-նամանը, որը մինչև այսօր էլ գործ են անում օծման ժամանակ:

Ահա այդ բէգաւի ան և բը գործածեց իվան III իր թոռ Դիմիտրիին թագաւոր պսակելու համար 1498 թիւին: Այդ եղաւ առաջին թագա-ւորական պսակը Ռուսաստանում: Նրանից յետոյ իվան IV Ահարկուն պսակվեց թագաւոր այդ բէգաւի անով, ընդունելով մի և նոյն ժամանակ և մեռօնի օծումը: Ֆէօդօր իվանիչի թագաւոր-ական պսակը ընդունելու ժամանակ իշխանու-թեան հանգանակները վրա աւելացրին և զայի-սօնը, իսկ Բօրիս Գօղոնովի ժամանակ—զէրմա-վան կամ արքայական գունդը: Այդ ժամանակից թագաւորութեան հետ միասին անբաժան կատար-վում է և մեռօնի օծումը, այն է օծում են մե-ռօնով թագաւորի ձախտը, ականջները, ուսուց-ները, շրթունքները, մատերը, ձեռները մէջը,

### ՆԱՄԱԿՆԵՐ ՄՈՍԿՎԱՅԻՑ

#### II

Մայիսի 7-ին

Ներկայ ամսի 9-ին, կէսօրից անց, լինելու է թագաւոր Կայսրի հանդիսաւոր մուտքը Մոսկովա, Պետրովսկայա Պալատից, որը կառուցված է 1775 թիւին՝ Եկատերինէ II-ի հրամանով, ի յիշատակ թիւրքիայի վրա տարած բաղձախի յաղթութիւն-ներէ: Առաջինը ուսաց թագաւորներէց, որ հանդիսաւոր մուտքից առաջ իջնանել է այդ պալատում, եղել է Պաւլէ I-ը 1797 թիւին: 1812 թիւին, Նապոլէօն I փախչելով Մոսկովայի հրդե-հից, ժամանակաւորապէս այդտեղ մնաց, իսկ յետոյ, երբ այգանդից էլ ստիպված էր խաշտա-ռակ փախուստ տալ՝ պալատը կրակի ճարակ էր դառել, և միայն Նիկոլայ I-ի օրով կրկին վե-րանորոգվեց: Ընթերցողը թող հետևի ինձ և ես նրան կը տանեմ կրեմլի մեծ պալատի մօտից, որը նոյնպէս շինված է Նիկոլայ I-ի օրով, մին-չև Պետրովսկայա պալատը, այն ճանապարհով, որով պէտք է կատարվի հանդիսաւոր մուտքը:

Կրէմլի մեծ պալատին կից, արեւելեան մասում, պալատի ընդարձակ բակն է, որի շուրջը գտնու-վում է հին տաճարների թուղ և Ուսպենսկի տաճարը, ուր լինելու է թագաւորութեան և օծ-ման արարողութիւնը: Բակում շինված է՝ պալատի սանդուղքներից մինչև տաճարի դռները՝ կարմիր մասնաշէնով ծածկած մի տախտակաւած ճանապարհ, իսկ բակի շուրջը, պատերի մօտ՝ տրիբուններ, բարձրատանիստ հանդիսականների համար: Տա-ճարի մէջ, մուտքից աջ՝ ոսկով արծաթով և թանկագին քարերով պատած սեղանն է, իսկ ձախ՝ չորս սիւների կենտրոնում, եկեղեցու մէջ-տեղում, բարձրանում է կարմիր մասնաշէնով ծած-կած և ոսկեզօծ ճաղերով չրջապատած տախտա-կաւածը՝ թագաւոր Կայսրի, Կայսրուհու և այլի Կայսրուհու համար: Տաճարի ներսում երեք պա-տերին կայքած են տրիբուններ բարձրատանիստ անձանց համար: 1812 թիւին տաճարը կողո-տվեց ֆրանսիացիների ձեռքով, բայց այժմ կրկին ոսկու և արծաթի մէջ կորած է:

Բակից այժմ դիմենք դուրս, հիւսիս-արեւելեան դռնով, 47 սաժէն բարձրութիւն ունեցող հսկա-յական զանգակատան մօտով, որի ոտքոտում գրած է կտորած՝ 12,372 պուդ ծանրութիւն ու-նեցող թագաւոր զանգակը, իսկ գրանցի մի քիչ հեռու, դռնից ձախ երևում է 2,400 պուդ-նեցող թագաւոր թիւղանոթը և ֆրանսիացի-ներից մնացած բաղձախի թիւղանոթներ և ուսու-բերը: Մեր առաջ Զարսկայա հրապարակն է, և հանդէպ՝ Կրեմլի պատերում երևում է Սլաւա-սկիա սրբազան դարպասը, որով անցնելիս պէտք է իւրաքանչիւրը վերցնի գլխարկը: Անցնելով այդ դարպասով, դուրս ենք գալիս Կրանայա հրապարակը: Կրեմլի պատերի հանդէպ, հրապա-րակի հիւսիս-արեւելեան կողմում, նոր Առեւտրա-

իսկ մինչև Պետրոս Մեծը օծում էին նաև մօ-րուքը: Օծումից յետոյ թագաւորները ընդունում են սուրբ հաղորդութիւն, իսկ օծումից առաջ բարձրաձայն կարգում են իրանց զանաւորութեան հանգանակը: Նոյն իսկ Մեծն Պետրոս թագաւոր պսակվեց այդ ձևով, բայց նրանով և վերջացաւ հին թագաւորական պսակաւորութեան ձևը և սկսվեց կայսերական թագաւորութեան նոր ձևը, որը գործ է ածվում մինչև այժմ: Այդ ձևով ա-ռաջին անգամ Մեծն Պետրոս կայսրուհի պսա-կեց իր կնոջ Եկատերինէ I-ին, որը մի և նոյն ժամանակ Ռուսաստանի մէջ առաջին թագաւոր-ված թագուհի եղաւ:

Այդ ժամանակից ի վեր թագաւորութեան ժա-մանակ այլ ես գործ չեն անում նախկին մօնո-մախիսան բէգաւի անով, այլ նրանք միայն հան-դէպի ժամանակ տանվում են եկեղեցի թագաւո-րի առաջից. միայն գործ է ածվում մօնոմախիսան մեռօնամանը, որովհետեւ օծումը պէտք է կա-տարվի այն մեռօնով, որը ուղարկվել է Կ. Պոլ-սից:

Այժմեան թագաւորութիւնների ժամանակ Մօ-նոմախի գլխարկի փոխարէն գործ է ածվում թիւղ, որ շինված է եւրոպական ձևով, հին թա-գաւորական վերարկների փոխարէն գործ է ած-վում ծիրանի և առհասարակ արարողութիւնների մեծ մասը վերցրած է Եւրոպայից:

Այժմ մի քանի աւելի մանրամասն տեղեկու-թիւններ հաղորդենք ուսաց կայսերական բէգաւի ան և բի մասին, որոնք ամեն մի թա-գաւորութեան և իշխանութեան հանգանակներն

կան շարքերի հսկայական շինութիւնն է, այժմ ամբողջապէս ծածկված գրօշակներով և հրաւա-ռութեան զարդարանքներով: Կարճենք երես-ներս դէպի հիւսիս-արեւմուտք. հրապարակի մէջ-տեղում Միխին և Պաժարսկու արձանն է: Հրա-պարակի երկարութեամբ, ճանապարհի երկու կողմից, շինված են հանդիսականների համար բաղձախտի տրիբուններ (նայելու տեղեր): Գնանք ցոյց տուած ուղղութեամբ, անցնենք Խ-վերեան Աստուածածնի հրաշակերտ պատկերի մատուռի մօտով, ալ կողմում թողնելով քաղա-քային դռման, իսկ ձախ կողմում պատմական Մուզէօնը, մեր առաջ Տվերսկայա փողոցն է, ո-րը զարդարված է մեծ տօնի առիթով:

Եթէ այդ փողոցը լինէր աւելի լայն և ուղիւղ, և մենք կարողանայինք մօտ 6 վերստ հեռու տես-նել, մենք կը նկատէինք ուղիւղ հիւսիս-արեւմտեան ուղղութեամբ՝ Կրէմլ՝ Կիտայ-գօրօզ եռանկիւնուց փողոցի ծայրին յաղթական կամարը և նրա միւս կողմից՝ Պետրովսկայա-պարկ կոչված արուար-ձանը, իսկ նրա մէջ նոյնանուն պալատը, ուր իշխանել են, մայիսի 6-ին, թագաւոր Կայսրը և թագուհի Կայսրուհին: Այս երկար ճանապարհի երկու կողմում, զարդարված սիւների գլխից կա-խած են եկեղեցական արեգակներ, 200 քալ հեռաւորութեամբ մէկը միւսից: Տները պատերը թաղված են գրօշակների և զարդարանքների ու հրաւառութեան լապտերների տակ: Ամեն տեղ, ուր հնարաւոր է, շինված են հանդիսատեսների համար տրիբուններ, իսկ պատուհանների զինը աւելի թանկ է, քան ես առաջ լսել էի. 500 ռուբլի մի պատուհանի համար միջակ զին է հաշուում:

Յաղթական կամարների միւս կողմից սկսվում է Տվերսկայա փողոցի շարունակութիւնը՝ Պե-տերբուրգեան խճուղին, որի սկզբում կանգնե-ցրած են երկու միթխարի սիւներ, պսակված մօնոմախիսան թագի ձևով շինված զանաւորով և զարդարած ոսկեզօծ շղթաներով, վահաններով, աճապին գրօշակներով, կայսրի և Կայսրուհու ա-նունների սկզբնատառերով և աղգային հիմնից բերած նախադասութիւններով: Ահա սարակ թէ ամբողջ ճանապարհի և թէ տները պատերի վրա գրված են՝ «Богъ Царя храни», «Парстуй на славу намъ, Царь православный» և այլն:

Յաղթական կամարներից սկսած մինչև պար-կը ձիաբարձի մի կայսրանի տարածութիւնն է: Ձիաբարձիները լինել են 8ուրտ և խոնավ եղա-նակ է. մի քանի օր տեղացող անձրեւները այսօր երեկոյան են դադարել: Պարկի հանդէպ, ճա-նապարհի ձախ կողմին, լայնածաւալ խողովակ դաշտն է, ուր լինում են ցուցահանդէսներ և զօրահանդէսներ:

Զեղ մօտ երկի հիմա կատարեալ գարուն է, իսկ այստեղ ծառերը յորդափները դեռ հաղիւ են բացվել և կանաչ սաղարթի տեղ ծառերը

են համարվում: Այդ բէգաւի աններն են՝— Կ և ն արար ի ա չ ը, Մ օ ն օ մ ա խ ի գ լ ի ա ր-կ ը, սուրբ բարմաները կամ խոյրը, վ ե հ ա յ ե տ ա կ ա ն ի ն ձ ո ը կ ա մ դ է թ ա-վ ա ն, գալիսօնը, պետական թուրը, պետական գրօշակը կամ պաւսիբը (павусь), պետա-կան կնիքը, պետական վահանը և արքայական դաճը: Առաջին երեք բէգաւի անները, այն է կե-ն արար ի ա չ ը, որը առանդութեան համաձայն պարունակում է իր մէջ Գրիստոսի խաչափայտից և գերեզմանից կտորներ, Մ օ ն օ մ ա խ ի գ ը լ-խ ար կ ը, որը ամբողջովին շինված է ոսկուց և զարդարված թանգազին քարերով՝ գլխաւորապէս յակնիթներով, լաւերով և զմրուխտներով և բար-ման և բը կամ խոյրը, որը մի ոսկե-գործ հիւսուածք է, որի վրա հիւսված են հին և նոր կրակաբանի սուրբերի պատկերներ և զար-դարված նոյնպէս թանգազին քարերով—գործ էին անվում մինչև իվան IV: Գալիսօնը սկսե-ցին գործածել նրա որդի Ֆէօդօր իվանիչի, իսկ դէրմալան՝ Բօրիս Գօղոնովի օրով:

Սակայն բոլոր այդ հին բէգաւի անները այժմ էլ չեն գործածվում թագաւորութեան ժամանակ: Մօնոմախի գլխարկի տեղ գործ է ածվում կա-ս երակաւ և մեծ թագը, որը շինվեց կկա-տերինէ I-ի թագաւորութեան համար և պարու-նակում է աւելի բան 2500 թանկագին քարեր, այդ թագը մի քանի անգամ փոփոխութիւն է կրել և յարմարեցվել թագաւորող կայսրների համար: Նա արժէ աւելի քան 3 միլիոն ռուբլի: Հին դէրմալայի փոխարէն գործ է ածվում նորը,

կարծես կանաչ ծխով լինեն պատած: Գալար մարգերը դեռ անձրեւի կաթիլներով են ծածկ-ված: Ձը նայած վատ եղանակին, կառքերի և ոտով գնացողների թիւը աճադին է: Ահա և պա-լատը, որը միջնադարեան ամրոցի նման չը զա-պատված է առաջնաւոր պարիսպներով և աչ-տարակներով: Պատերը նորից ներկված են, այն-պէս որ կարծես կարմիր աղիւմները և նրանց արանքի սպիտակ ցեմենտը պահպանած լինեն իրանց թարմութիւնը: Կռները, պատուհանների չըջանակները բոլորովին սպիտակ են: Պալատի մէջտեղում գլխաւոր շինութիւնն է, որի վրա փողիւղում է երկգլխեան արծիւով ոսկեգոյն-գրօշակը: Պալատի գլխաւոր մուտքը դիմաց, որը նայում է խողովանից դաշտին, խմբված է ամբա-խը, և չը նայած որ ոտակները յայտնել են նրան, թէ Յարը չէ բարեհաճելու դուրս գալ՝ չէ-ցրվում և ուսու ժողովրդին յատուկ խորին ջեր-մեռանդութեամբ նայում է երկեղածութեամբ և սիրով պատուհաններին, որոնք փակված են: Պալատի առաջ, պարիսպների մուտքերի գլխա-ւոր դարպասի մօտ կանգնած են բաղձախի ոս-տիկաններ և պահապաններ, իսկ պալատի շուր-ջը պատում են չորս ձիաւոր կողակներ, մօտ 150 քալ հեռաւորութեամբ մէկը միւսի ետեկց: Միմուտ է, բայց ամբողջ ոչ միայն չէ ցրվում, այլ և նորանոր խմբեր գալիս են ստուարացում նրա թիւը. միայն կառքերն են, որ կամաց կա-մաց հեռանում են պարկից քաղաք, որի Տվերս-կայա փողոցը, արտակարգ շարժման հորհրդ, այժմ մարդկանց և կառքերի մի ծով է նման:

Մայիսի 4-ին, երեկոյան ժամի 9-ին, ժամանե-ցին քաղաք Ամենայն հայոց Կաթողիկոսի ներկա-յացուցիչ Երեմիա արքեպիսկոպոսը, Աստարիանի թեմի առաջնորդ Արիստակէս արքեպիսկոպոսը և Մետրոպօլիտարեան, որոնք միասին իշխա-նեցին հայոց եկեղեցու բակում պատրաստած ընակարանում:

L.

### ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Մայիսի 9-ին

Նոյա կայսերական Մեծութիւնների թագաւորու-թիւնը յարգելու համար մեր քաղաքում ժողոված է 5,000 ռուբլի, որի տոկոսով սկսի պահեն մի որդեգիր բարձրագոյն դպրոցում: Տեղացի հայերը հաւաքել են 800 ռուբլի, որպէս զի թագաւոր-ութեան օրը՝ բարձրատանիստ ծառայողներին ճաշ տրվի. նոյնպէս ճաշ է տրվելու տեղին 300 զի-նուորդներին:

Ամսիս 11-ին վերջանում են թեմական դպրոցի ընտրութիւնները: Եկող տարի ուսուցչական խմբի մէջ լինելու են մի քանի փոփոխութիւններ.

Հ. Ժամարեան, ցանկաւով յարգել իր եղբայր Հայրապետի յիշատակը՝ նուիրեց 600 ռ. թեմա-

որը շինվել է Պաւլէ I կայսրի ժամանակ. նա զարդարված է ամենագեղեցիկ և ամենամաքուր աղամաններով: Հին գալիսօնի տեղ այժմ գործ է ածվում մի նորը, որը շինվել է դար-ձեալ Պաւլէի ժամանակ: Այդ գալիսօնը յատ նը-չանաւոր է և հուշակված ամբողջ աշխարհում, ո-րովհետեւ նրա վրա ամրացրած է յայտնի «Որօ-վեան» կոչված արմատը, որը կուտում է 1943/4 կարատ և որը 1772 թիւին կկատարինէ II կայս-րուհու սիրելի Գրիգորի Որօվը գնեց հայազգի Լազարեանից 400,000 ռուբլիով:

Կայսերական իշխանութեան հին նշաններից մէկն էլ համարվում է և արքայական դահը, որը գործ է ածվում այժմ: Այդ դահը կոչվում է Ա-լէքսէյ Միխայլովիչ Յարի գահ և յայտնի է «ալ-մաստեան» անունով, որովհետեւ նա զարդարված է 876 խոյար արմատներով, 1223 յակնիթներով և անհամար մարգարիտներով: Այդ դահը ընծա-յել են 1659 թիւին Ալէքսէյ Միխայլովիչ թագա-ւորին Հնդկաստանի հայերը՝ Չոհրաբեան անու-նով պատգամաւորի ձեռքով, որի մասին լատի-ներեն արձանագրված է գահի վրա:

Թէև կայսրուհիները սովորաբար պսակվում են «փողը» կոչված թագով, բայց ներկայ կայս-րուհի Ալէքսանդրա Ֆէօդօրովնայի թագաւորու-թեան համար յատկապէս շինված է մի նոր «փողը» թագ, որ պարունակում է 600 կարատ ամենա-մաքուր աղամանը և 2,000-ից աւելի փողերից աղամաններ:

Հ. Ա.

կան դպրոցներ, այդ փողի տոկոսով պիտի ուսանեն երկու չքաւոր աշակերտներ:

Մեղանում դեռ դարձան նշան չը կայ: Զորք առատ անձրեւները դարձաւ չեն տալիս: Խակ մայիսի 5-ին ձիւն եկաւ:

Արցախեցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մայիսի 12-ին

Խնդրում ենք Վշակի մէջ տեղ տալ մեր հետեւեալ բացատրութեան:

«Տարազ» ժամանակագր. խմբագիր պ. Արախանեանցը «Տարազ» № 17-ում ծանր մեղադրանք բարդեց պ. Մալումեանի վրայ, թէ սա հիմնական միմիայն Վշակի մէջ տպւած էստանց կենտր. երկու ջուր գրութիւնների վրա՝ չորհրդակալութիւն յայտնեց այն բոլոր անձանց, որոնք ջերմ համակրութիւն են յայտնել իրան, և թէ պ. Մալումեանի ստացած նամակները մէջ չը կայ որ և է համակրութեան արտայայտութիւն զէպի նրա անձնագրութիւնը, ուստի նա հրապարակով մեղադրեց պ. Մալումեանին կեղծութեան մէջ և նրանից պահանջեց հերքել այս մեղադրանքը: Պ. Մալումեան հրաւիրեց պ. Արախանեանցին՝ զալ անձամբ ծանօթանալ այն ղոկումներների հետ, որոնց հիման վրա ինքը հրապարակաւ չը-նորհակալութիւն էր յայտնել, և այնուհետև յետ վերջին իր մեղադրանքն ու ներողութիւն խնդրեց, և այս առիթով յիշեց մի քանի ղոկումներներ: Պ. Արախանեանցը չը կատարեց պ. Մալումեանի օրինաւոր պահանջը, չը կամեցաւ ծանօթանալ փաստերին, որոնք կամ ապացուցանէին կամ հերքէին նրա մեղադրանքը: Պ. Արախանեանցի այս վարմունքն ինքն ըստ ինքեան խիստ պակասարկելի էր, և նրա մեղադրանքը պ. Մալումեանի դէմ՝ դրանու զրպարտութիւնն էր: Բայց մենք զսպեցինք մեր զայրոյթը պ. Արախանեանցի այս վարմունքի դէմ, յուսալով որ նա իր պատիւը կը վերականգնէ: «Տարազում» հրապարակով յետ վերջինով իր զրպարտութիւնը ու ներողութիւն խնդրելով պ. Մալումեանից: Սակայն պ. Արախանեանցը ոչ միայն չը դիմեց իր պատիւը վերականգնելու այս վերջին միջոցին, այլ իր պատասխանով «Տարազ» № 18-ում ցոյց տուեց, որ նա ընդունակ է նաև հարցը խեղաթիւրելու և անվայել սոսիալականութեան: Նա քաջութիւն չունեցաւ խոստովանելու, թէ պ. Մալումեանը, բացի Վշակում տպւած գրութիւններից, ստացել է և ուրիշ բաւական թիւով գրութիւններ, ուրեմն և թէ սոստ է քի իր մեղադրանքն առաջին կէտը: Նա այս մասին լռելով՝ ծանրացաւ իր մեղադրանքի երկրորդ կէտի վրայ, և սոսիալականութեամբ ճշմեց ապացուցանել, թէ պ. Հախումեանի ստոր և վայրենի վարմունքի դէմ պ. Մալումեանին ուղղված նամակները չեն պարունակում չորհրդակալութիւն, այն ինչ ամեն մի կրթված մարդ գիտէ, որ մի որ և է արտայայտութիւն, որ ուղղված է անարդար վարմունքի դոհին և դատարարութեամբ է նրան վերադարձնել հասցնող անձնագրութիւնն ու գործը՝ ինքն ըստ ինքեան համակրութիւն է զէպի այդ դոհը, այլապէս նա կամ չէր գրել, կամ չէր ուղղվի այդ դոհին:

Այս պատճառով, այլ ևս մի կողմ թողնելով պ. Արախանեանցին, միմիայն հասարակութեան մէջ որ և է կասկած չը թողնելու համար՝ մենք պարտք համարեցինք ծանօթանալ պ. Մալումեանի ունեցած ղոկումներների հետ և նրանց մասին հաշիւ տալ այստեղ: Մենք մի առ մի ծանօթանալով այս ղոկումներների հետ՝ գտանք հետեւեալը.

1) Բացի «Մշակ» մէջ մինչև մայիսի 3-ը տպւած գրութիւններից՝ գոյութիւն ունեն նաև չը տպւած 20 ղոկումներ, որոնցից 18-ը ստացված են մինչև մայիսի 3-ը: Սրանք ստացված են Արեւիկի (Գեղամայի), Կարսից, Գարա-սուբազարից, Արշակունցից, Գուրայից, Շուշու-րից, Մոսկուայից, Եւրասիայից, Կուրդիստանից, Թիֆ-լիսից, Թիսի-Խան-Շուրայից: Նոր-Բայազէտից, Բուսուլից, Վերին-Ագուլիսից, Մեղրից և Ալէք-սանդրովից:

2) Այս 18 ղոկումներներից 4-ը հեռագրի են, 13-ը նամակ, և 1-ը ոսկէզօծ ժետօն, վրան փորագրված էսպիրիտ 9, և պ. Մալումեանի ու նուրի-րոյի անունները:

3) Հեռագրիներից մէկը կրում է 5 անձի ստորագրութիւն:

4) Բոլոր 17 գրաւոր ղոկումներները գրված են ընդհանրապէս համակրական զգացմունքներով և արտայայտում են խորին զգուհեղ զէպի պ. Հախումեանի վարմունքը:

5) Այս 17 ղոկումներից 10-ը պարունակում են նաև՝ յատկապէս համակրական խօսքեր, ուղղված պ. Մալումեանի անձին և գործունէութեան:

Սրանից երևում է, որ կատարելապէս ճիշդ և հիմնաւոր էին պ. Մալումեանի նամակի այն խօսքերը, որոնցով նա չորհրդակալութիւն էր յայտնում էսայն բոլոր անձանց, որոնք թէ խմբ-բովին և թէ առանձին-առանձին հեռագրերով և նամակներով յայտնել են նրան իրանց ջերմ համակրութիւնը:

Սա. Մալումեանից հաղորդեց Վալերիան Լուկիւիչ Բրիտ, Միքայէլեանց Կոստ, Գիւլնազարեանց Սամուէլ Բալաղեան Բր. Յոսեփեանեան

ՆԻՒՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Էջմիածնի պաշտօնական օրգան «Արարատ» ամսագրի վերջին համարում կարդում ենք, թէ Ստորակրթի թեմակալ առաջնորդ բարձր սրբա-զան Արխատկէս արքեպիսկոպոսը հայրապետա-կան հրամանով Պետերբուրգ հասնելով՝ կատա-րեց Նորին վեհափառութեան յանձնարարու-թիւնը և մայիսի սկզբին պիտի ուղևորվի Մոսկ-վա, ու թագաւորութեան հանդիպին ներկայ լի-նելու: Արխատկէս սրբազանի առ վեհափառ Հայրապետն ուղարկած զեկուցումից երևում է, որ եկեղեցական-ժխական բոլոր դպրոցները պիտի փակվին և սեպտեմբերին չը պիտի վե-րաբացվին:

Լոնդոնում շուտով լոյս կը տեսնի Ռուսէր Հարրիսի մի գիրքը՝ «From Batum to Baghdad» («Բաթումից մինչև Բագդադ»): Հարրիսը անցել է այդ ճանապարհը ծպտեալ կերպով, մասնա-կան բարոյշի կերպարանքով: Անգլիական «Daily News» լրագրի ստելով, գիրքը պարունակում է իր մէջ հետաքրքիր տեղեկութիւններ պարսկա-կան թիւրքերի կենցաղավարութեան մասին: Գրքի մէջ կը լինեն և նկարներ:

Մայիսի 10-ին երեկոյեան, և յաջորդ օրը, մայիսի 11-ին, ցերեկով, Թիֆլիսի «Սաղ» կաշված քաղաքապետը և «Նաբեքեմիայա» փողոցի մի մասը սաստիկ հեղեղվեց Կուր գետի վարարելու պատճառով: Սաղի և Դեմիսեմեօսկայա հրապա-րակների վրա ջրի բարձրութիւնը հասնում էր 4—5 սաժէնի, իսկ Պեմսեմեօսկի փողոցի վրա ջուրը բարձրացել էր երկու արշինաչափ: Սաղի հրապարակի մեծ մասը ջուրը տարել է և ջրի իջ-նելուց յետոյ մնացել է մի անշարժ կտոր: Հե-ղեղը քաղաքապետի ընակիցներին մեծ վնասներ է պատճառել, և ինչպէս միշտ, այս անգամ էլ ամենամեծ վնասը հասել է աղքատ դասակար-գին:

Կիրակի օր, մայիսի 12-ին, Մուշտայից այ-գում տեղի ունեցաւ ժողովրդական դրօսանք՝ վիճակախաղ, յօգուտ «Նապի» ընկերութեան, որ գրաւել էր բաւական բազմութիւն: Վիճակախա-ղի տոմսերը երեկոյեան 10 ժամին սպառվել էին, որից եղանակացել պէտք է, որ ընկերութեանը բաւական գումար պիտի մնայ:

Անձրեային եղանակից յետոյ վերջին երկու օրը Թիֆլիսում սկսվեց մայիսեան եղանակի Գեղեցիկ օրերի հետ միասին բացվեցին քաղա-քի զանազան այգիները, որոնք գրաւում են զէպի իրանց ազգաբնակչութեան բոլոր դասա-կարգերը: Տարաբախտաբար այդ այգիներից մեծ մասը, թէ իրանց անպիտան խոհանոցների թէ փողը ի շատէ օրինաւոր զուարճութեան բա-ցակալութեան պատճառով՝ մեծ անյարմարու-թիւններ են ներկայացնում հասարակութեան համար:

Մեկ հեռագրում են Գրօզնի քաղաքից, մայի-սի 13-ից հետեւեալը. «Կարա-Մուրզայի կոնցեր-տը, որ պէտք է արվել Գլաւուս, յետաձգված է: Կարա-Մուրզան ճանապարհ ընկաւ Վաղիկա-կաղ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բէյութի գործակալութիւնը հաղորդում է Կ. Պոլսից, մայիսի 13-ից, որ անգլիական զեսպան Ֆիւլիպ Կէրրի իր թարգմանի հետ հրաւիրված էր պալատ թէյի մայիսի 12-ի երեկոյեան և ներ-կայ եղաւ պալատական մի թատրոնական ներ-կայացման: Սուլթանը սիրալի կերպով էր խօ-սում զեսպանի հետ զանազան առարկաների մասին, խոսափելով քաղաքական հարցերից: Մայիսի 18-ին Ֆիւլիպ Կէրրի արձակուրդ վեր-ցնելով կը հեռանայ Կ. Պոլսից:

Նիւ-Եօրկում հրատարակվող մի լրագրում կարդում ենք, թէ լրագրում մարտ 18 թուակա-նաւ կը գրեն Լոնդոնի լրագրիներին. «Թէրմանի գիւղերէն պատգամաւորութիւն մը եկաւ հոս օգնութիւն խնդրելու: Անկողին և վերմակ չու-նենալով գիւղացիք յարգի և խոտի մէջ քնա-ցած են այս ձմեռ: Քանի մը չարաթի առաջ սուլթանը ստակ զրկել էր այս կողոպտուած գիւղերուն բաշխելու համար: Այդ դրամէն եր-կու մէջիտից էինկա գիւղերէն մէկուն: Հինգ ձիաւոր զինուորներ երբին դայն, և գիւղին մե-ծերուն երկու մէջիտից յանձնել վերջ, նրա-սան գիւղին մէջ և մնացին 12 օր, պահանջելով բոլոր ժամանակ ամենապաւ կերակուրները իրենց և ձիերուն համար: Կը հաշուի թէ այս կերպով իրենց բերած ստակին 30 անգամը ծախք անել տուած են գիւղին: Այսպէս է թրքական օգնու-թիւնը»:

Ռուսաց գործակալութիւնը հեռագրում է Կ. Պոլսից հետեւեալը. «Անատոլիա ուղարկված վե-րատուգող յանձնաժողովը, որի նախագահն է Սաադ-է-Հին փաշա, յետ է կանչված: Գլխաւոր կօմիսար Շաբիր փաշային հրամայված է զննու-թիւն կատարել Դիարբեքլիում, Բիթլիսում և Վանում»:

ՆԱՄԱԿ ԲՈՒԳԱՐԱՅԻՑ

ԲՈՒՆԴՈՒԿ, ապրիլի 18/30-ին

Վերջերս, Ռուսնուկի ազգային ընթերցարանի վարչական մարմինը ունեցաւ մի նոր և քնաճա-տելի որոշում: Վարչութիւնը՝ իր այս նոր որո-շումով՝ ամեն չորեքշաբթի օր ընթերցարանը պիտի բանալ կիններուն համար, որոնք մինչև հիմա զուրկ մնացած էին ինքնազարգացման օր և իցէ միջոցներէ: Ըսել է թէ ամէկ վերջ՝ Ռուս-նուկի կիններն ալ, եթէ ուղեն, պիտի ունենան չարաթական գումարամներ, պիտի կրնան պա-րասպել օգտակար հեղինակութեանց ընթերցա-նութեամբ և ասպաղէզ ու միջոց պիտի ունենան իրենց անձնականութեանը համար աշխատելու: Արեւիկ կարեւոր նորութիւն մըն է և մենք՝ ան-կեղծ սրտով կը շնորհաւորենք վարչութիւնը իր յոռաջողմանայն այս նոր քայլին համար:

Յաւալի կէտ մը եթէ կայ, այն է որ Ռուսնու-կի կինները, շատ անշարժ բացառութեամբ մը, զեռ կը դանդաղին և կը դժկամակին մօտենալ ընթերցարանին: Վարչութիւնը՝ մարտ 31 թուա-կանով յատուկ չորեքշաբթեան նամակները զրկեց կիններուն, հաղորդեց իր որոշումը և հրաւիր կար-դաց՝ որպէս զի ապրիլ 3-ի չորեքշաբթի օրէն սկսելով, ընթերցարան յաճախեն: Որոշման գոր-ծադրութեան առաջին չորեքշաբթի օրը գրեթէ ոչ մէկ կին համակերպած էր վարչութեան հրա-ւերին և այս վերջին, երրորդ չորեքշաբթի օրը իսկ՝ հաշիւ 8—10 կիներ հաւաքված էին:

Գործը բոլորովին յուսահատական չէ սակայն, քանի որ արդէն գիտենք, թէ ամեն նորամուտ զաղափար՝ որքան ալ օգտակար ըլլայ, չի կրնար զիւրութեամբ ընդունելութիւն գտնել, մանա-ւանդ երբ հասարակութեան մէջ հօգը կերպով կը տիրապետեն դեռ աւանդական հին բարքեր, սովորութիւններ ու նախապաշարմանք: Կը սի-րենք հետապէս յուսալ, որ յատուկ կայ չորեք-շաբթի՝ հետեւելով առջիններու օրինակին՝ ուրիշ կիններ ալ պիտի գան և այսպէս, հետզհետէ, ըն-թերցարան յաճախող կիններու թիւը պիտի ստուա-րանայ:

Վ. Շահրիման

ՆԱՄԱԿ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, ապրիլի 20-ին

Թաւրիզում գոյութիւն ունեն մի քանի ընկե-րութիւններ սեփական կանոնադրութեամբ, հաս-տատված Արապատական թեմական առաջնոր-դից, սեփական վարչութեամբ և դրամագլխով: Այդ ընկերութիւններն են՝ Կանանց, Ընթերցարա-նական, Գաղութական և Ալէք: Սրանց վրա աւելա-նում է և Բարեգործական ընկերութիւնը: Աւելորդ չեմ համարում մի քանի խօսքով կովկասի հա-սարակութիւնը ծանօթացնել սրանց հետ:

Մինչև այսօր իր գործունէութեամբ աչքի է ընկել Կանանց ընկերութիւնը, որն երկու է՝ Բերդաթաղի և Լիւաւայի: Լիւաւայի կանանց ըն-կերութիւնը հիմնված է 1891 թին, ներկայումս նա ունի 60 անդամ, որոնք բոլորն էլ Լիւաւա-յիցն են: Ընկերութիւնը պահում է մի կարուծիք արհեստանոց, որտեղ այժմ սովորում են 30 կանայք և օրինորդներ, մեծամասնութիւնը ձրի, արհեստանոցն այս տարվանից ունեցաւ և գոր-գադորական բաժին: Որիորդաց դպրոցում սովո-րում են 30-ից աւելի աղքատ և որը աշակեր-տուհիներ, ստանալով ընկերութիւնից թոշակ, հալուստ և զրքեր: Շատ աղքատ ընտանիքներ ստանում են հաց, չորեր, վառելիք և այլն: Ընկերութեան պահած արհեստանոցում կրթու-կան մասը բոլորովին բացակայում է, արհեստա-նոց մտնում են անգղապէս անձինք և հէնց այդ-պէս անգղապէս էլ աւարտում են: Ընկերութեան ուղարկութիւնն ենք հրաւիրում այդ կարեւոր կէ-տի վրա:

Բերդաթաղի ընկերութիւնը հիմնված է աւելի ուշ, 1895 թ.: Ընկերութիւնը կոչվում է Արա-պատական կանանց ընկերութիւն և նպատակն է՝ նպաստել Արապատական կանանց կրթու-թորին և մի քանի կարեւոր արհեստներ տարա-ծել կանանց և օրինորդների մէջ: Հաստատ հա-ւատացած լինելով, որ այդ ընկերութիւնը մօտ ապագայում ձեռնհաս պիտի լինի իրադրութեա-նի ծրագրերը, չենք կարող չը նկատել, որ նրա գործունէութիւնը Թաւրիզից մի քալ զէնը չէ անցնում, այն էլ բացառապէս Բերդաթաղում է կենտրոնացած: Ընկերութիւնը այդ թաղում պահում է մի օրինակելի մանկական պարտէզ:

Կանանց ընկերութիւնից յետոյ իր գործու-նէութեամբ աչքի է ընկնում Ընթերցարանական ընկերութիւնը, որը նոյնպէս երկու է—Բերդա-թաղի և Լիւաւայի: Աւաղինը բաւական հարուստ է և ունի կանոնաւոր դրամաբան, ուր կարելի է գտնել ժողովրդին մատչելի ամեն տեսակ գիրք և հրատարակութիւն, իսկ երկրորդը, շնորհիւ այն հանգամանքի, որ հիմնված է աւելի աղքատ հասարակութեան մէջ և անհամեմատ աւելի նոր է, ունի միայն 700 կտոր գիրք: Անցեալները կայացած ընդհանուր ժողովի հաշից երկայն, որ ընթերցարանից օգտվել են մօտ 2000 հոգի և դուրս է տարված մօտ 5000 կտոր գիրք: Ընկե-րութիւնը որոշել է ուշք դարձնել մի շատ կարեւոր կէտի վրա—կանանց ընթերցանութեան վրա: Վճռված է չարաթվայ մէջ մի օր յատկացնել կա-նանց, երբ միմիայն կանայք կարող են յաճա-խել:

Ինչ վերաբերում է միւս ընկերութիւններին, պիտի ասենք, որ նրանց գոյութիւնը միմիայն անուանական է, իսկ ամբողջ տարվայ գործու-նէութիւնը մի քանի թուականից զէնը չէ անց-նում: Այդ ընկերութիւնները հիմնված են աւելի շուտ նախադասի, զանապաղի և քարտուղարի պաշտօններ վարելու, քան մի գործ կատարելու համար: Գուցէ անցեալում նրանք մի քան արել են, բայց ներկայումս ոչինչ չը կայ: Յանկալի է, որ այդ ընկերութիւնները միանան Բարեգործական ընկերութեան հետ, որն իր գործունէութիւնը շուտով պիտի սկսէ:

Արտաւաղ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսից հեռագրում են մայիսի 2-ին Համաթի գործակալութեան. «(Սմանեան կառա-վարութիւնը այսօր վճռեց յանձնել Պարսկա-ստանին Ձէմալ-է-Հաքին չէլիքին, իմանալով որ Ան-գլիան զրկել է նրան իր պաշտպանութիւնից: Շահի սպանողը խոստովանել է, որ դաւադրու-թիւնը կազմվել է Ձէմալի տանը, որտեղ և վի-ճակ է գցվել թէ ով պէտք է սպանի Շահին: Ձէմալը գտնվում է ոստիկանական հսկողութեան տակ»:

